Հաստատում եմ՝

«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ»

հիմնադրամի տնօրեն Էդիտա Գզոյան

ԿԱՐԾԻՔ

Է. 00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման Լիլիթ Սմբատի Քոսյանի «Արևմտահայ գաղթականությունը Արևելյան Հայաստանում և Անդրկովկասում 19-րդ դարի 90-ական թթ.» ատենախոսության մասին:

Լիլիթ Սմբատի Քոսյանի «Արևմտահայ գաղթականությունը Արևելյան Հայաստանում և Անդրկովկասում 19-րդ դարի 90-ական թթ.» թեմայով ատենախոսությունը նվիրված է արևմտահայության պատմության կարևոր, թեև պատմագրության մեջ համեմատաբար քիչ ուսումնասիրված մի ժամանակաշրջանի:

Ատենախոսն ուսումնասիրել է 1890-ական թվականներին արևմտահայության նկատմամբ իրականացված զանգվածային կոտորածների հետևանքները՝ առանձնակի ուշադրություն դարձնելով դրանց առաջացրած ժողովրդագրական տեղաշարժերին, ինչպես նաև սոցիալ-տնտեսական և քաղաքական հետևանքներին: Այդ գործընթացների արդյունքում արևմտահայ բնակչության ստվար հատվածը հարկադրված էր լքել իր հայրենի բնակավայրը և գաղթել տարբեր ուղղություններով, այդ թվում՝ Արևելյան Հայաստան և Անդրկովկաս:

Սույն հետազոտության գիտական նորույթն ապահովելու նպատակով շրջանառության մեջ են դրվել Հայաստանի ազգային արխիվում պահպանվող նորահայտ փաստաթղթեր: Մասնավորապես, առանձնահատուկ արժեք են ներկայացնում Կովկասի հայոց բարեգործական ընկերության արխիվային ֆոնդից քաղված նյութերը: Արխիվային նյութերին զուգահեռ՝ ատենախոսության համար աղբյուրագիտական առանցքային նշանակություն ունի ժամանակի մամուլը: Ատենախոսը հավաքագրել և վերլուծել է շուրջ 20 անուն թերթ ու ամսագիր, որոնցում հրապարակված տեղեկությունները հնարավորություն են տվել ներկայացնելու հայ գաղթականներին առնչվող իրողությունները:

Ատենախոսն առաջին՝ «1890-ական թթ. արևմտահայերի զանգվածային կոտորածների հետևանքներն ու գաղթականության տեղաշարժերը» գլխում ներկայացնում է բռնաճնշումների ենթարկված արևմտահայության սոցիալական և տնտեսական դրությունը: Հետազոտության մեջ վերլուծվում են զանգվածային բնույթ կրող բռնի կրոնափոխությունները, դրանց առաջացման նախադրյալներն ու հետևանքները: Միաժամանակ ուսումնասիրվում է թուրքական իշխանությունների կողմից իրականացված մշակութային և հոգևոր արժեքների համակարգված ոչնչացման քաղաքականությունը:

Անդրադառնալով գաղթականության տեղաշարժերին՝ ատենախոսը վերլուծում է դրանց հիմնական պատճառները և աշխարհագրական ուղղությունները՝ առանձնացնելով տեղաշարժերը դեպի հարևան նահանգներ, Օսմանյան կայսրության այլ շրջաններ, ինչպես նաև կայսրությունից դուրս, վերլուծվում են արևմտահայության Կովկաս գաղթելու հիմնական ուղղությունները, որոշ թվական և վիճակագրական տվյալներ:

Ատենախոսությունն անդրադառնում է Երևանում, Բաքվում, Թիֆլիսում, Սև ծովի առափնյա շրջանում և հարակից տարածքներում հաստատված հայ գաղթականների սոցիալ-տնտեսական խնդիրներին: Վերլուծվում են հայրենի բնակավայրեր վերադարձի հարցն ու վերջինիս հետ կապված բարդությունները:

Երկրորդ՝ «Ռուսական պետական, հասարակական և կրոնական կազմակերպությունների աջակցությունը արևմտահայ գաղթականությանը» գլուխը ատենախոսության առանքային բաժինն է, որտեղ հանգամանորեն վերլուծվում են ռուսական պետական մակարդակում կայացված որոշումները, ցուցաբերած օգնությունն ու վերաբերմունքը հայ գաղթականների նկատմամբ:

Մանրամասնորեն ներկայացվել են Կովկասի հայոց բարեգործական ընկերության և վերջինիս մասնաճյուղերի հայանպաստ գործունեությունը: Մասնավորապես լուսաբանվում են նպաստների բաշխման գործընթացները, գաղթականների փոխադրման և տեղավորման կազմակերպումը, հիվանդությունների կանխարգելման միջոցառումները, գաղթականներին աշխատանքի տեղավորման խնդիրները, ինչպես նաև այդ ուղղություններով տրամադրված ֆինանսական միջոցներն ու իրականացված նախաձեռնությունները:

Գլխի երկրորդ ենթագլխում վերլուծվում է Կովկասի կառավարչապետության կողմից արևմտահայությանը ցուցաբերված օգնությունը՝ դիտարկելով այն Ռուսական կայսրության ներքին և արտաքին քաղաքականության, ինչպես նաև պետական քարոզչության համատեքստում: Ներկայացվում են այն վարչական որոշումները, որոնք հնարավորություն են տվել Ռուսաստանի տարածքում կազմակերպելու հանգանակություններ, ինչպես նաև ընդգծվում է Ռուս ուղղափառ եկեղեցու

դերակատարությունը, տարբեր հասարակական կազմակերպությունների և անհատ գործիչների ծավալված գործունեությունը:

Առանձին ներկայացվել է Հայ առաքելական եկեղեցու ցուցաբերած աջակցությունը: Ատենախոսն անդրադառնում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի նախաձեռնություններին, կաթողիկոս Խրիմյան Հայրիկի ձեռնարկած քայլերին՝ ցարական կառավարության հետ ձեռք բերված որոշ համաձայնությունների շրջանակում Ռուսաստանում հանգանակություններ կազմակերպելու ուղղությամբ, ինչպես նաև գաղթականներին և որբերին աջակցելու նպատակով իրականացված միջոցառումներին:

Երրորդ գլուխը՝ «Արևմտահայության օգնության կազմակերպումը եվրոպական և ամերիկյան կազմակերպությունների կողմից», վերաբերում է սկանդինավյան երկրներում, Գերմանիայում, Ֆրանսիայում և ԱՄՆ-ում գործող այն կազմակերպությունների գործունեությունը, որոնք Համիդյան կոտորածներից տուժած արևմտահայությանն օգնություն ուղարկելու նպատակով ծավալել են լայնամասշտաբ հայանպաստ աշխատանքներ: Գլխում ներկայացվում է հիմնականում Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրության հայաբնակ վայրերում նրանց կողմից իրականացված հումանիտար և որբախնամ գործունեությունը, ինչպես նաև արտասահմանյան մամուլում տպագրված հրապարակումների, զեկույցների միջոցով օտարերկրյա հասարակության իրազեկման բարձրացումը:

Ատենախոսության բոլոր գլուխներում տեղ գտած նյութն ատենախոսը հոդվածների տեսքով հրատարակել է գիտական պարբերականներում: Լիլիթ Քոսյանի ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է հետազոտական աշխատանքի բովանդակությանը:

Ատենախոսությունը զերծ չէ նաև թերություններից և բացթողումներից, որոնցից մի քանիսի վրա կցանկանայինք հրավիրել ատենախոսի ուշադրությունը:

1. Ատենախոսության վերնագրի (թեմա) և աշխատանքի ներածության մեջ ձևակերպված հիմնական նպատակի միջև գոյություն ունի անհամապատասխանություն: Որպես հիմնական նպատակ ձևակերպված է հետևյալը. «վերլուծելու ու ներկայացնելու Համիդյան ջարդերի հետևանքով աշխարհով մեկ սփռված գաղթականության խնդիրը և վերհանել թե ինչ ուժերով և մեխանիզմներով է կազմակերպվել արևմտահայ գաղթականներին ցուցաբերված օգնությունը» (էջ 4), մինչդեռ աշխատանքի վերնագիրն ու գլխավոր թեման է Արևելյան Հայաստանում և Անդրկովկասում արևմտահայ գաղթականությանը վիճակը:
2. Նպատակին հասնելու համար ներկայացված վեց խնդիրներից՝ ատենախոսության թեմային ամբողջությամբ է առնչվում միայն չորրորդը («լուսաբանել կովկասյան կառավարչապետության վարած քաղաքականությունը գաղթականների նկատմամբ») և մասամբ՝ վեցերորդը («վերլուծել <u>ռուսական</u> և եվրոպական պետությունների, ինչպես նաև օտարերկրյա միսիոներների և միջազգային կազմակերպությունների արձագանքը» (էջ 4) :
3. Ատենախոսության կառուցվածքն ու բովանդակությունը մասամբ են համապատասխանում ատենախոսության թեմային: Այսպես.
   3.1. Թեև ատենախոսը նշում է, որ «խնդրո առարկա գաղթականության թվաքանակի վերաբերյալ հակասական տվյալներ են դրվել շրջանառության մեջ» (էջ 34), բերում որոշ հիմնավորումներ դրա պատճառների մասին, այնուամենայնիվ, ճիշտ կլիներ փորձ արվեր

ժողովրդագրական տվյալները վերլուծել ու եզրակացություններ անել:

3.2. Երկրորդ գլխի 2.3. ենթագլուխը, որը կրում է «Հայ Առաքելական եկեղեցու ցուցաբերած օգնությունը արևմտահայ գաղթականներին» վերնագիրը, ծավալուն անդրադարձ է պարունակում Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի՝ կոտորածներից տուժած արևմտահայության՝ Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրության այլ տարածքներում օգնության կազմակերպման ուղղությամբ գործունեությանը (էջ 75-83), ինչը դուրս է ատենախոսության հիմնական թեմայի շրջանակներից:

3.3. Ատենախոսության թեմային ամբողջությամբ չի առնչվում աշխատանքի երրորդ գլուխը, որը կրում է «Արևմտահայության օգնության կազմակերպումը եվրոպական և ամերիկյան կազմակերպությունների կողմից» վերնագիրը և բաղկացած է «Հյուսիսային Եվրոպայում կազմակերպված հայանպաստ օգնությունը» (էջ 84-89), «Արևմտյան Եվրոպայում կազմակերպված հայանպաստ գործունեությունը» (էջ 90-101) և «Ամերիկյան կազմակերպությունների ցուցաբերած օգնությունը ջարդերից փրկված հայությանը» (էջ 102-111) ենթագլուխներից՝ բացառությամբ երկու պարբերության (էջ 85-86):

4. Աշխատանքում առկա են ոչ գիտական, մոտավոր ձևակերպումներ և չափազանցություններ. այսպես, ըստ հեղինակի Համիդյան ջարդերից հետո Օսմանյան կայսրությունում հայերի «սոցիալական հենքը» «գրեթե կազմաքանդվել էր» (էջ 11), «Գոլիցինը ...այնպիսի կառավարման համակարգ ստեղծեց, որը ցույց տվեց, թե ինչպես չպետք է կառավարել Կովկասը» (էջ 37), ռուսահպատակություն

ընդունելու հրամանը գաղթականներին «կայծակի պես շանթեց» (էջ 38), «կայուն զարգացում չստացած երևույթներ» (էջ 42), կրկնություններ (էջ 27 և էջ 60):

5. Աշխատանքում ներկայացված բազմաթիվ փաստեր, իրողություններ, երևույթներ և պնդումներ ծանոթագրված չեն, բացակայում են աղբյուրագիտական հիմքերը (տե՛ս էջ 12, 13, 19, 40, 59 և այլն): Մի նշումով որպես 1899 թ. Կարսի մարզ գաղթած հայերի թվաքանակի համար սկզբնաղբյուր ներկայացված է «երջանկահիշատակ պատմաբան» Դերենիկ Մուրադյանի՝ հեղինակին բանավոր կերպով հաղորդած տեղեկությունը (էջ 29), ինչը պատմագիտական ուսումնասիրության համար անընդունելի է:
6. Հեղինակն անփութություն է դրսևորում որոշ փաստերը ներկայացնելու հարցում: Այսպես, Կարինում անգլիական հյուպատոս Ռ. Գրևսը ներկայացված է որպես «ռուսական հյուպատոս», հղվող աղբյուրը սխալ էջի վրա է (էջ 27), Օսմանյան կայսրությունում Մեծ Բրիտանիայի դեսպան Ֆիլիպ Քարին ներկայացվում է որպես «Ֆրանսիայում Անգլիայի դեսպան» (էջ 16):
7. 1887 և 1888 թ. աղբյուրներ վկայակոչելով հեղինակը հաղորդում է, որ Կ. Պոլսի պատրիարք Մաղաքիա Օրմանյանը որոշակի քայլեր է ձեռնարկել հայերի կրոնափոխության դեմ (էջ 13-14), սակայն հանրահայտ փաստ է, որ Օրմանյանը պատրիարք է ընտրվել 1896 թ. նոյեմբերին:
8. «Եզրակացություններ» բաժնում տեղին կլիներ առավել վերլուծական դրույթներով ամփոփել ատենախոսությունը:
9. Աշխատանքում առկա են բազմաթիվ լեզվական սխալներ, քերականական անհարթություններ, խմբագրական բացթողումներ (էջ 17,18, 22, 25, 35, 37, 42, 44, 61, 113 և այլն):

Նշված թերություններով և բացթողումներով հանդերձ՝ Լիլիթ Քոսյանի՝ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման

ներկայացվող ատենախոսությունը հիմնականում համապատասխանում է Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի պահանջներին, իսկ ատենախոսությունը պատրաստ է հրապարակային պաշտպանության:

Կարծիքը հաստատվել է «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի Հայոց ցեղասպանության աղբյուրագիտական ուսումնասիրությունների բաժնի (4 փետրվարի 2026 թ.) նիստում:

Քննարկմանը մասնակցել են բաժնի վարիչ, գիտական քարտուղար պ. գ. թ. Նարինե Մարգարյանը, բաժնի ավագ գիտաշխատողներ պ.գ.թ. Ռոբերտ Թաթոյանը և բ.գ.թ. Էլինա Միրզոյանը, գիտաշխատող Նարինե Հակոբյանը, կրտսեր գիտաշխատողներ Գոհար Խանումյանն ու Աննա Կազարյանը, լաբորանտ Հեղինե Հովհաննիսյանը:

Հայոց ցեղասպանության աղբյուրագիտական ուսումնասիրությունների բաժնի վարիչ, գիտական քարտուղար, պ. գ. թ.՝ Ն. Մարգարյան

07.02.2026 թ.